

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ», ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և դրան կից փաթեթի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով:

1. Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում չկա դատավորների միջև գործերի բաշխման արդյունավետ և թափանցիկ համակարգ: ՀՀ դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 19-րդ կետի համաձայն՝ դատարանների նախագահների խորհրդի կողմից են մշակվում և հաստատվում «ամառային ատյանի դատարաններում գործերի բաշխման, վերաքննիչ դատարաններում դատական կազմերի և դրանցում նախագահող դատավորների նշանակման, դատավորների ինքնաբացարկի, դատավորների գործուղման, արձակուրդի կամ հիվանդության դեպքում դատարանի նախագահի և դատավորների փոխարինման կարգերը»: Նշված դրույթի հիման վրա ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը հաստատել է դատարաններում գործերի բաշխման պատահական ընտրության կարգ, որը, սակայն, լիարժեք չի ապահովում գործերի բաշխման օբյեկտիվ չափանիշները:

Դատավորների միջև գործերի պատահական բաշխման արդյունավետ համակարգի առկայությունը չափազանց կարևոր նշանակություն ունի ամբողջ դատական համակարգի կենսագործունեության համար: Այն ՀՀ Սահմանադրության 97-րդ հոդվածով երաշխավորված դատավորների անկախության ապահովման կարևոր բաղադրիչներից է, ինչպես նաև կարևոր նախապայման ՀՀ Սահմանադրության 1-ին և 19-րդ հոդվածում ամրագրված օրինական դատավորի սկզբունքի կենսագործման համար:

Բացի այդ, այդպիսի համակարգի ներդրման անհրաժեշտությունը բխում է «Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ Կիևյան հանձնարարականների» 12-րդ կետի պահանջներից, համաձայն որի գործերի բաշխումը պետք է իրականացվի կամ պատահական սկզբունքով, կամ՝ կանխորոշված, հստակ և օբյեկտիվ չափորոշիչների հիման վրա:

Այսպիսով, անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ դատական օրենսգրքում՝ դատական համակարգի գործունեությանն առնչվող նման կարևոր հարցը կարգավորելով օրենքի մակարդակով:

2. Արդարադատության համակարգի արդյունավետության, ինչպես նաև դատական իշխանության գործունեության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների անհրաժեշտությունը գնահատելու

համար ոչ միայն դատական իշխանությունը, այլև ոլորտում քաղաքականություն մշակող մյուս սուբյեկտները կարիք ունեն հուսալի վիճակագրական տվյալների առկայության: Կառավարությունը պետության ներքին քաղաքականության ոլորտում իրեն վերապահված լիազորությունները արդյունավետ իրականացնելու նպատակով կարիք ունի որոշակի վիճակագրական տվյալների, որոնց աղբյուրը դատական իշխանությունն է: Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքը հատուկ կարգավորումներ չի նախատեսում դատական վիճակագրության վարման առումով: Հարցին հպանցիկ անդրադառնում է «Դատական ծառայության մասին» ՀՀ օրենքը, որի 3-րդ հոդվածը սահմանում է, որ Դատական դեպարտամենտը «4) վերլուծում և ամփոփում է դատական պրակտիկան և դատական վիճակագրությունը.»։ Գործնականում դատական վիճակագրության վարման և հրապարակման գործառույթը իրականացնում է դատական դեպարտամենտը: Դատական գործի վիճակագրական դասակարգիչները հաստատվել են Հայաստանի Հանրապետության դատարանների Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության դատարանների գործավարության կանոնները հաստատելու մասին» թիվ 23L որոշմամբ և դրա հետագա փոփոխություններով: Սակայն գոյություն չունի որևէ օրենսդրական կարգավորում, որը կսահմանի դատական վիճակագրությանը ներկայացվող նվազագույն պահանջները, վիճակագրական տվյալները հանրությանը մատչելի դարձնելու պարտադիր պահանջ և կնախատեսի հրապարակման ենթակա վիճակագրական տվյալների պարտադիր նվազագույնը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ տարբեր երկրներում ներդրված են դատարանների կատարողական արդյունքները և աշխատանքի որակը հասարակությանը կամ վերահսկիչ մարմնին (ազգային ժողով/պառլամենտ, արդարադատության նախարարություն, արդարադատության խորհուրդ, այլ նախարարություններ) ներկայացվելու կիսամյակային և տարեկան հաշվետվությունների համակարգ: Արդարադատության ապահովման եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) սխեմայի համաձայն՝ մասնակից երկրները պարտավորվում են ներկայացնել տարեկան հաշվետվության, մոնիթորինգի և գնահատման համակարգերի կիրառման վերաբերյալ տեղեկատվություն:

Նման հաշվետվությունները դատական իշխանության նկատմամբ հանրային մոնիթորինգի կարևոր մեխանիզմ են: Դատարանների գործունեության արդյունքները և աշխատանքի որակը հանրությանը ներկայացնելու համար տարբեր երկրներում կիրառվում են մոնիթորինգի տարբեր համակարգեր: Նշված տարբերությունները կապված են հաշվետվությունների ներկայացման հաճախականության (օրինակ՝ եռամսյակային, կիսամյակային, տարեկան և այլն), պատասխանատու մարմինների, ինչպես նաև մոնիթորինգի ենթակա տեղեկատվության տեսակի հետ: Միջազգային պրակտիկայում առավել հաճախ կիրառվող ցուցանիշներն են ստացվող դատական գործերի քանակը, վարույթի տևողությունը (առաջին, վերաքննիչ և (կամ) բոլոր ատյանների դատարաններում), հետաձգված դատական գործերի քանակը, ընթացիկ դատական գործերի քանակը, գործն ըստ էության լուծող որոշումների քանակը, դատավորների և դատարանների ծանրաբեռնվածության մակարդակը, դատարանի բյուջետային միջոցներն ու ծախսերը:

Հայաստանի Հանրապետության Նախագահի վերը նշված կարգադրության 3.9-րդ կետը նախատեսում է միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով ներդնել դատական իշխանության կողմից իր գործունեության վերաբերյալ հաշվետվությունների հրապարակման համակարգ:

Այս ոլորտում միջազգային չափանիշները և սկզբունքային մոտեցումները ամրագրված են Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) «Եվրոպական

դատական համակարգերի վերլուծություն»¹, «Դատական համակարգի մոնիթորինգի և գնահատման գործընթացի ուսումնասիրություն»², «Դատական վիճակագրության վարման ուղեցույց»³ փաստաթղթերում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Եվրոպայի խորհրդի անդամ մոտ 43 երկրներում ներկայացվում են տարեկան հաշվետվություններ: Տարբեր երկրներում կիրառվում են մոնիթորինգի տարբեր համակարգեր: Նշված տարբերությունները կապված են հաշվետվությունների ներկայացման հաճախականության, պատասխանատու մարմինների, ինչպես նաև մոնիթորինգի ենթակա տեղեկատվության տեսակի հետ:

Նիդերլանդներում դատական իշխանության գործունեության գնահատման և մոնիթորինգի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է արդարադատության նախարարությանը և օրենսդիր մարմնին պաշտոնական տարեկան հաշվետվության ձևով (Jaarverslag): Խորվաթիայում յուրաքանչյուր դատարան ունի վիճակագրության վարչություն: Արդարադատության նախարարությունում գործում է նաև դատական համակարգի գործունեության կազմակերպման ենթավարչություն: Իրականացվում է դատական գործունեության (մասնավորապես ստացվող դատական գործերի, որոշումների քանակի, հետաձգված դատական գործերի քանակի և վարույթի տևողության) կանոնավոր մոնիթորինգ: Նշված մոնիթորինգն իրականացվում է դատարանի վիճակագրական վարչության միջոցով և վերահսկվում է դատարանի նախագահի կողմից: Այնուհետև տվյալներն ուղարկվում են արդարադատության նախարարություն:

Սերբիայում բոլոր դատարանները պարտավորվում են կազմել դատարանների, դրանց ստորաբաժանումների և դատավորների գործունեության վերաբերյալ եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ և ներկայացնել դրանք արդարադատության նախարարությանը, վերին ատյանի դատարանին և Սերբիայի գերագույն դատարանին:

Սլովենիայում դատարանները պարտավոր են կազմել տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվություն՝ մասնավորապես ստացվող դատական գործերի, որոշումների քանակի, հետաձգված դատական գործերի, վարույթների տևողության և այլ հարցերի վերաբերյալ: Յուրաքանչյուր դատարան դատավորների հայեցողությամբ իրականացնում է վերոնշյալ տվյալների գծով պարբերական մոնիթորինգ: Տարին երկու անգամ նշված տվյալները ենթակա են պարտադիր հավաքագրման և հրապարակման: Դատարանների կողմից կատարված աշխատանքի վերաբերյալ նախորդ տարվա վիճակագրական հաշվետվությունները պետք է ուղարկվեն արդարադատության նախարարություն մինչև հունվարի 31-ը, իսկ ընթացիկ տարվա առաջին կիսամյակի վերաբերյալ հաշվետվությունները՝ մինչև հուլիսի 31-ը: Սլովենիայի Հանրապետության գերագույն դատարանն իր գործունեության վերաբերյալ ներկայացնում է վիճակագրական հաշվետվություն տարեկան կտրվածքով: Դատարանի նախագահը պարտավոր է արդարադատության նախարարությանը և, մասնավորապես դատավորներին անձամբ գրավոր տեղեկացնել նախորդ տարվա ընթացքում դատարանների գործունեության հետ կապված խնդիրների վերաբերյալ մինչև ընթացիկ տարվա փետրվարի 28-ը՝ դատավորների տարեկան համագումարի ընթացքում: Տվյալները հավաքագրվում և հրապարակվում են նախարարության կողմից:

¹ Արդարադատության ապահովման եվրոպական հանձնաժողով (CEPEJ), Եվրոպական դատական համակարգեր, 2006 թ. խմբագրություն (2004 թ. տվյալներ), էջ 70, (2004 թ. տվյալներ), (http://www.coe.int/t/dghl/cooperation/cepej/evaluation/2006/CEPEJ_2006_eng.pdf)

Եվրոպական դատական համակարգեր, 2012 թ. խմբագրություն (2010 թ. տվյալներ), էջ 122 (http://www.coe.int/t/dghl/cooperation/cepej/evaluation/2012/Rapport_en.pdf)

² http://www.coe.int/t/dghl/cooperation/cepej/series/Etudes6Suivi_en.pdf

³ CEPEJ GUIDELINES ON JUDICIAL STATISTICS, Strasbourg, 11 December 2008, CEPEJ(2008)11

Էստոնիայում այս գործառնությունը կատարում է արդարադատության նախարարությունը: **Կիպրոսում** տարեկան հաշվետվությունները պետք է ներկայացվեն գերագույն դատարանին, իսկ **Իսլանդիայում՝** գերագույն դատարանին և շրջանային դատարանների վարչական խորհուրդներին՝ արդարադատության նախարարության հետ համագործակցությամբ: **Ֆրանսիայում** արդարադատության նախարարությունը դատարաններից պարբերաբար տեղեկատվություն է պահանջում (եռամսյակային և տարեկան հաշվետվություններ): **Իտալիայում** դատարանի նախագահն է կազմում տարեկան հաշվետվությունները արդարադատության նախարարության վիճակագրական ծառայություններից ստացված տվյալների հիման վրա:

Այն երկրները, որոնք կիրառում են դատական վիճակագրության հավաքագրման և կան մոնիթորինգի համակարգ առավելապես կիրառում են ստորև հիշատակվող ցուցանիշները.

- ստացվող դատական գործերի քանակը
- վարույթի տևողությունը (առաջին, երկրորդ և/կամ բոլոր աստիճանների դատարաններում)
- հետաձգված դատական գործերի քանակը
- ընթացիկ դատական գործերի քանակը (ներառյալ՝ այն գործերը, որոնք գերազանցել են սահմանված որոշակի ժամկետը)
- որոշումների քանակը
- դատավորների և դատարանների ծանրաբեռնվածության մակարդակը
- դատարանի բյուջետային միջոցներն ու ծախսերը
- որակական ցուցանիշներ (դատավորների անկախությունը և անկողմնակալությունը, արդար դատավարությունը, հիմնավորված որոշումների կայացումը, դատավորի կողմից թույլ տրված սխալների ուղղման դեպքերի քանակը, դատական վարույթների նախապատրաստման որակը, դատարանի վարչությունների և ստորաբաժանումների աշխատանքի և դատական փաստաթղթերի որակը, դատավորների, դատարանի պաշտոնյաների և այլ աշխատակիցների վայելուչ պահվածքը, բողոքներին արձագանքման գործընթացի արդյունավետությունը):

Դատարանների կողմից հավաքագրման և վերլուծության ենթակա վիճակագրական տվյալների նվազագույն պահանջները, դրանց հավաքագրման և վերլուծության կարգը առավել մանրամասն նկարագրված են Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) «Դատական վիճակագրության վարման ուղեցույց»⁴ փաստաթղթերում:

Արդյունավետ մոնիթորինգի և գնահատման համակարգի ստեղծման վերջնական փուլը գործողությունների և հաշվետվողականության մեխանիզմն է՝ հիմնված հավաքագրված տվյալների կիրառման վրա: Ուսումնասիրության արդյունքում պարզվել են տվյալների օգտագործման երեք հիմնական տեսակներ: Որոշ երկրներ հավաքագրում են տվյալները, սակայն ոչ մի կերպ չեն օգտագործում դրանք, ինչպես օրինակ, Խորվաթիան տարիներ ի վեր: Որոշ երկրներ, ինչպիսիք են, օրինակ, Ֆրանսիան, Իտալիան և Նիդերլանդները, կիրառում են նշված տվյալները տարբեր նպատակներով, օրինակ, նշված տվյալների միջոցով ապահովում են կատարված ծախսերի համար դատարանների հաշվետվողականությունը, իրականացնում են ռեսուրսների տեղաբաշխում, ինչպես նաև առավել թափանցիկ են դարձնում դատական համակարգի գործունեությունը: Վերջապես որոշ երկրներ, ինչպես օրինակ, Սլովենիան, օգտագործում են հավաքագրված տվյալները դատական հաստատության առաջընթացի գնահատման և համապատասխան քաղաքականությունների ընդունման նպատակով:

⁴ CEPEJ GUIDELINES ON JUDICIAL STATISTICS, Strasbourg, 11 December 2008, CEPEJ(2008)11

3. ՀՀ Դատական օրենսգրքը դատարանների նախագահների համար պաշտոնավարման ժամկետի որևէ սահմանափակում չի նախատեսում: Մասնավորապես, նշված օրենսգրքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Դատավորը պաշտոնավարում է մինչև իր 65 տարին լրանալը», ինչը տարածվում է նաև դատարանների նախագահների վրա: Դատարանների նախագահները ներկայումս պաշտոնավարում են մշտական հիմունքներով՝ մինչև դատական օրենսգրքով սահմանված կարգով նրանց լիազորությունների դադարեցումը և պաշտոնավարման դադարումը:

Դատարանի նախագահների կարգավիճակի վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ նախատեսելիս պետք է առաջնային ելակետ ընդունել այն մոտեցումը, որ դատարանների նախագահներն առաջին հերթին դատավորներ են, ինչպես մյուս բոլոր դատավորները, միայն այն տարբերությամբ, որ նրանց, ի հավելումն բուն դատավորի գործառնությունների, վերապահված են որոշ այլ կազմակերպչական գործառնություններ: Հակառակ մոտեցումը կարող է հանգեցնել դատարանների նախագահների դերի գերազանհատման և ակամայից պայմաններ ստեղծել վերջիններիս կողմից դատարանի այլ դատավորների նկատմամբ որոշակի ազդեցություն գործելու հնարավորության համար:

Վերոնշյալ մոտեցումներն իրենց արտացոլումն են գտել նաև այդ ոլորտի հեղինակավոր միջազգային փաստաթղթերում: Մասնավորապես, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի «Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ Կիևյան հանձնարարականների»⁵ 11-րդ կետի համաձայն.

«Դատարանների նախագահների դերը պետք է խստորեն սահմանափակված լինի հետևյալ իմաստով. նրանք պետք է ստանձնեն միայն այնպիսի դատական գործառնություններ, որոնք համարժեք են դատարանի այլ անդամների կողմից իրականացվող գործառնություններին: Դատարանի նախագահը չպետք է միջամտի այլ դատավորների կողմից դատական որոշումների կայացմանը և չպետք է մասնակցի դատավորների ընտրությանը: Դատարանի նախագահը չպետք է կարողանա ազդել վարձատրության վրա (պարգևավճարների և արտոնությունների վերաբերյալ տես 13-րդ պարբերությունը): Նրանք կարող են ունենալ ներկայացուցչական և վարչական, այդ թվում՝ ոչ դատական աշխատողների նկատմամբ հսկողության գործառնություններ: Վարչական գործառնությունները կատարելու համար անհրաժեշտ է կառավարչական կարողությունների զարգացման համար նախատեսված վերապատրաստում: Դատարանների նախագահները չպետք է դատարանի ռեսուրսները բաշխելու՝ իրենց իրավասությունները չարաշահեն դատավորների նկատմամբ ազդեցություն գործադրելու նպատակով»:

Այսինքն, դատարանների նախագահների դերը չպետք է անհարկի ուռճացվի՝ սահմանափակվելով միայն ներկայացուցչական և կազմակերպչական որոշակի գործառնությունների իրականացմամբ: Իսկ դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետների սահմանափակումներ նախատեսելն ուղղված է այդ նպատակի իրականացմանը:

Մասնավորապես, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի վերոնշյալ փաստաթղթի 15-րդ կետի համաձայն.

«Դատարանների նախագահները պետք է նշանակվեն սահմանափակ թվով տարիների պաշտոնավարման ժամկետով՝ վերջինս ընդամենը մեկ անգամ երկարաձգելու հնարավորությամբ: Գործադիրի կողմից նշանակման դեպքում պաշտոնավարման ժամկետը պետք է կարճ լինի՝ առանց երկարաձգման հնարավորության»:

Նույն փաստաթղթի 16-րդ կետի (Դատարանների նախագահների թափանցիկ և անկախ ընտրությունը) համաձայն.

«Դատարանների նախագահների ընտրությունը պետք է թափանցիկ լինի: Դատարանի նախագահի թափուր տեղի առկայության մասին անհրաժեշտ է հայտարարություն հրապարակել: Պետք է

⁵ <http://www.osce.org/hy/odihr/75436?download=true>

կարողանան դիմել պահանջվող ստաժ/կործ ունեցող բոլոր դատավորները: Ընտրելու իրավասությամբ օժտված մարմինը կարող է անցկացնել թեկնածուների հարցազրույցներ: Արդյունավետ տարբերակ է, օրինակ, կոնկրետ դատարանի դատավորների կողմից այդ դատարանի նախագահի ընտրության մեխանիզմը: Գործադիրի կողմից նշանակման դեպքում առաջադրում կատարելու իրավասությունը պետք է վերապահվի խորհրդակցական մարմնի, օրինակ՝ դատական խորհրդին կամ որակավորման հանձնաժողովին (տես 4-րդ պարբերությունը)՝ հաշվի առնելով նաև տեղի դատավորների կարծիքները, ընդ որում՝ գործադիրը պետք է իրավունք ունենա առաջադրումը մերժել միայն պատճառաբանված որոշմամբ: Այդ դեպքում խորհրդակցական մարմինն իրավասու է առաջադրել այլ թեկնածուի: Բացի այդ, գործադիրի անհարկի ձևումից պաշտպանվելու նպատակով խորհրդակցական մարմինը պետք է հնարավորություն ունենա ձայների որակյալ մեծամասնությամբ հաղթահարել գործադիրի վետոն:»

Դատարանի նախագահների պաշտոնավարման ժամկետի սահմանափակման անհրաժեշտության մասին ընդգծվել է նաև ԵԱՀԿ/ՇՀՄԻԳ և Վենետիկյան հանձնաժողովի՝ «Ղազախստանի դատական համակարգի և դատավորների կարգավիճակի մասին» սահմանադրական օրենքի վերաբերյալ համատեղ եզրակացությունում⁶ (2011թ., 7-18 հունիս, կետ 42), որում, մասնավորապես, նշվում է.

«Եթե գործադիր իշխանությունը որոշիչ ազդեցություն ունի դատարանների նախագահների նշանակման ընթացակարգում, ապա նշանակումները պետք է լինեն հստակ ժամանակահատվածով, և սահմանափակումներ պետք է լինեն հնարավոր վերանշանակման համար: Սա կարևոր է, որպեսզի նվազեցվի նախագահների կողմից դատավորների նկատմամբ ազդեցությունը, որն ավելի կուժեղանա ավելի երկար ժամանակահատվածում: Բացի այդ, վերընտրման ժամկետը կարող է էականորեն վտանգել նախագահի անկախությունը, ով կարող է իր աշխատանքում ինչ-որ պահի ենթարկվել ազդեցության՝ ցանկանալով կրկին նշանակվել գործադիրի կողմից»:

Բացի այդ, դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետի սահմանափակումներ ներդնելու անհրաժեշտությունը բխում է նաև դատավորների միջև առողջ մրցակցություն ապահովելու անհրաժեշտությամբ: Դատարանների նախագահների անժամկետ նշանակման պարագայում դատավորների այդ հնարավորությունը էականորեն սահմանափակվում է, քանի որ գործնականում դատարանների նշանակված նախագահները պաշտոնավարում են բավականին երկար ժամանակ՝ դրանով իսկ բացառելով այդ պաշտոնում թափուր տեղի առաջացման հնարավորությունը: Այնինչ, դատավորների համար ծառայողական առաջխաղացման հնարավորության ապահովումը բավականին կարևոր նշանակություն ունի դատական համակարգի արդյունավետ գործունեության համար, որի անհրաժեշտությունն ամրագրված է նաև համապատասխան միջազգային փաստաթղթերում («Դատավորի կարգավիճակի մասին Եվրոպական խարտիա», կետ 4, ՄԱԿ-ի Դատական իշխանության անկախության հիմնարար սկզբունքներ», կետ 13, և այլն):

Դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետի համար սահմանափակումներ նախատեսելը բավականին տարածված է միջազգային պրակտիկայում: Ընդ որում, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձի ուսումնասիրությունը, այն տարածված է ինչպես ԱՊՀ երկրներում (Ռուսաստան, Ռուսաստանի Դաշնություն, Ղազախստան, Ղրղզստան, Վրաստան), այնպես էլ Արևմտյան և Արևելյան Եվրոպայի երկրներում (Հոլանդիա, Իսլանդիա, Սերբիա, Մակեդոնիա, Խորվաթիա, Բոսնիա):

Մասնավորապես, վերոնշյալ երկրների օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս վեր հանելու այդ երկրներում դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետների հետ կապված հետևյալ սկզբունքային կարգավորումները՝

⁶ <http://www.osce.org/odihr/78869>

ա. Դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետը հիմնականում 4-ից 6 տարի է: Մասնավորապես՝

- 4 տարի - Սերբիայում⁷, Մակեդոնիայում⁸, Խորվաթիայում⁹
- 5 տարի - Ուկրաինայում¹⁰, Ղազախստանում¹¹, Վրաստանում¹², Իսլանդիայում¹³
- 6 տարի - Ռուսաստանի Դաշնությունում¹⁴, Հոլանդիայում¹⁵
- 4 տարի և 6 տարի (կախված դատական աստիճանից) – Բոսնիայում¹⁶
- 3-ից 10 տարի (կախված դատական աստիճանից) – Ղրղզստանում¹⁷

Ուկրաինայի «Դատական համակարգի մասին օրենքի»¹⁸ 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Դատարանի նախագահն ու փոխնախագահը նշանակվում են այդ պաշտոնին 5 տարի ժամկետով՝ Ուկրաինայի Նախագահի կողմից...»:

Խորվաթիայի «Դատարանների մասին օրենքի»¹⁹ 73a հոդվածի համաձայն. «Դատարանի նախագահը նշանակվում է 4 տարի ժամկետով...»:

բ. Երկրների մի մասում առկա են միևնույն անձի կողմից նույն դատարանի նախագահ նշանակվելու սահմանափակումներ: Մասնավորապես՝

- Միևնույն անձը չի կարող նշանակվել 1 անգամից ավել – Ղրղզստանում, Էստոնիայում
- Միևնույն անձը չի կարող նշանակվել 2 անգամ անընդմեջ – Հոլանդիայում, Ռուսաստանի Դաշնությունում, Վրաստանում

«Ռուսաստանի Դաշնության դատական համակարգի մասին օրենքի»²⁰ 13-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. «Սույն հոդվածի 2-րդ մասում նշված դատարանների նախագահներն ու փոխնախագահները պետք է նշանակվեն 6 տարի ժամկետով: Միևնույն անձը կարող է նշանակվել նույն դատարանի նախագահ (փոխնախագահ) մեկ անգամից ավել, բայց ոչ ավել, քան 2 անգամ անընդմեջ»:

գ. Որոշ երկրներում դատարանի նախագահներն ընտրվում են տվյալ դատարանի դատավորների կողմից:

⁷ Serbian Law on Judges (2008), art. 72, <http://www.unhcr.org/refworld/country,,NATLEGBOD,,SRB,,4b5712672,0.html>

⁸ Law on Courts [The former Yugoslav Republic of Macedonia (2006)], art. 47, available at: <http://www.unhcr.org/refworld/docid/44b276d04.html>

⁹ http://www.vsrh.hr/CustomPages/Static/HRV/Files/Legislation_Judiciary-Act_Law-on-Courts_1994.pdf

¹⁰ The Law of Ukraine on the Organization of the Judicial Power and Judges, art. 20

¹¹ <http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/APCITY/UNPAN019170.pdf>

¹² Organic Law of Georgia on Courts of General Jurisdiction (2009), art. 32 <http://www.supremecourt.ge/files/upload-file/pdf/saertosasamart.pdf> (in Georgian)

¹³ <http://eng.innanrikisraduneyti.is/laws-and-regulations/nr/109>

¹⁴ <http://www.legislationline.org/documents/action/popup/id/4255>

¹⁵ Roel de Lange, *Judicial Independence in the Netherlands* in *Judicial Independence in Transition* (2012),

¹⁶ <http://www.hjpc.ba/intro/pdf/LawonHJPCConsolidatedtext.pdf>

¹⁷ The Constitution of Kyrgyzstan (2010), art. 94.8; The Constitutional Law on the Status of Judges(2011), art. 24

¹⁸ <http://www.legislationline.org/documents/action/popup/id/7115>

¹⁹ http://www.vsrh.hr/CustomPages/Static/HRV/Files/Legislation_Judiciary-Act_Law-on-Courts_1994.pdf

²⁰ <http://www.legislationline.org/documents/action/popup/id/4255>

Իսլանդիայի «Ղատական համակարգի մասին օրենքի»²¹ 5-րդ բաժնի համաձայն. «Գերագույն դատարանի դատավորներն ընտրում են Ղատարանի նախագահ 5 տարի ժամկետով և նախագահին փոխարինող նույն ժամկետով»:

Այսպիսով, հաշվի առնելով միջազգային չափանիշները, ինչպես նաև դիտարկելով տվյալ ոլորտում տարբեր երկրների փորձը՝ անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ դատական օրենսգրքում՝ դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետների համար սահմանելով ողջամիտ սահմանափակումներ:

4. «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը եվ ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ նախագահի կարգադրությամբ որպես առանձին գործողություն է սահմանվել վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառնության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Սահմանվել է, որ օրենքի միատեսակ կիրառության եւ մեկնաբանության ապահովման հարցում վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառնությունների ապահովման եւ վճռաբեկ դատարանի գործունեության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ուսումնասիրել լավագույն միջազգային փորձը՝ ըստ անհրաժեշտության իրականացնելով վճռաբեկ բողոքարկման ինստիտուտի կատարելագործմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ: Վերոհիշյալ խնդիրների լուծմանը կարող են օժանդակել առաջին աստիճանի եւ վերաքննիչ դատարանների դատական ակտերի կառուցվածքին եւ բովանդակությանը ներկայացվող պահանջները, հատկապես նույնական փաստական հանգամանքներով այլ դատական ակտեր կայացնելիս, ինչպես նաեւ վճռաբեկ բողոքին ներկայացվող պահանջների հստակեցումը, վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումների հրապարակումը:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը նախատեսված են ինչպես ՀՀ դատական օրենսգրքում, այնպես էլ քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերում: Դրանք են՝

- 1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար.
- 2) վերանայվող դատական ակտն առերեսույթ (prima facie) հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումներին.
- 3) ստորադաս դատարանի կողմից թույլ է տրված առերեսույթ դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետեւանքներ:

Կարծում ենք նշված հիմքերի առումով առկա են հետեւյալ թերությունները՝

1. Վարույթ ընդունելու երկրորդ հիմքը՝ վերանայվող դատական ակտն առերեսույթ (prima facie) հակասում է վճռաբեկ դատարանի նախկինում ընդունած որոշումները, ուղղակիորեն պայմանավորված է օրենքի միատեսակ կիրառելու վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառնության իրականացման անհրաժեշտությամբ եւ հնարավորություն է տալիս վճռաբեկ դատարանին հետեւողական լինել ստորդաս դատարանների կողմից իր կայացրած որոշումների կատարման հարցում: Այսինքն նշված հիմքն, ըստ էության, վարույթ ընդունելու առաջին հիմքի (բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար) տարատեսակ է:

2. Նշված հիմքերը չափազանց ընդհանուր են ձեւակերպված: Օրենսդրական ակտերում սահմանված չէ, թե ինչ պայմանների դեպքում ներկայացված բողոքը վարույթ ընդունելը կարող է էական նշանակություն

²¹ <http://eng.innanrikisraduneyti.is/laws-and-regulations/nr/109>

ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար կամ ինչի հիման վրա պետք է որոշվի ծանր հետեւանքներ առաջացնող առերեսույթ դատական սխալը:

Ելնելով դատավարական օրենքներով սահմանված կարգավորումներից եւ ձեւավորված իրավակիրառ պրակտիկայից՝ վճռաբեկ դատարանը ներկայումս պատճառաբանում է միայն բողոքները վերադարձնելու մասին որոշումները եւ ընդհանրապես չի պատճառաբանում վարույթ ընդունելու մասին որոշումները (քաղաքացիական և քրեական դատավարության օրենսգրքերում բացակայում է նման օրենսդրական պահանջ), իսկ վճռաբեկ դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերում, որպես կանոն, չի պատճառաբանում, թե ինչ հիմքով եւ պատճառաբանությամբ է վճռաբեկ դատարանը կոնկրետ բողոքը ընդունել վարույթ:

Այսպես որեւիցե դատավարական օրենք վճռաբեկ դատարանի գործն ըստ էության լուծող որոշման պարզատիր տարր չի սահմանում կոնկրետ բողոքը վարույթ ընդունելու հիմքի պատճառաբանումը: Արդյունքում վճռաբեկ դատարանի կողմից կոնկրետ գործով կայացվող որեւիցե որոշման մեջ չի պատճառաբանվում է, թե ինչու է վճռաբեկ դատարանը կոնկրետ բողոքը ընդունել իր վարույթ եւ ինչ հիմքով:

Նշված կարգավորումը դատավարության մասնակիցների մոտ կարող է հանգեցնել այն եզրահանգման, որ վճռաբեկ դատարանը ներկայացված բողոքները վարույթ է ընդունում կամայականորեն՝ վարույթ ընդունելու հիմքերի բացակայության պայմաններում կամ առանց վարույթ ընդունելու հիմքերի հարցի լուծման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում նախատեսված է միայն բողոքը վերադարձնելու որոշումը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ինչպես բողոքը վերադարձնելու, այնպես էլ առանց քննության թողնելու մասին որոշումը: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու բովանդակային հիմքերին չհամապատասխանելու հիմքով վերադարձվելու դեպքում վճռաբեկ դատարանը կայացնում է «վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշում», որը մեր կարծիքով նույնպես ճիշտ չէ: Բացի այդ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանի որոշումն ըստ էության հանդիսանում է վերջնական դատական ակտ, սակայն այն չի կայացվում հանուն Հայաստանի Հանրապետության: Ուստի անհրաժեշտ է օրենսդրական փոփոխությունների միջոցով շտկել այդ թերությունները եւ միատեսակություն ապահովել տարբեր դատավարություններում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում առկա են որոշակի խնդիրներ դատական ծանուցագրերի հետ կապված, ինչը հանգեցնում է դատական նիստերի հետաձգման եւ հիմք է հանդիսանում ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի հոդվածով սահմանված գործերը ողջամիտ ժամկետում քննելու սահմանադրաիրավական պահանջին: Այդ նպատակով նշված դատավարական օրենսգրքում անհրաժեշտ է կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություն, որի արդյունքում կբարձրանա դատական ծանուցումների արդյունավետությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածը սահմանում է դատական նիստերի հետաձգման հիմք հանդիսացող հանգամանքները: Սակայն իրավակիրառ պրակտիկանում արդարադաջիորեն առաջանում են դատական նիստերի հետաձգման այլ հիմքեր, որոնք օրենքով նախատեսված չեն: Այդ նպատակով անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով հնարավորինս սպառիչ սահմանել դատական նիստերի հետաձգման համար հիմք հանդիսացող հանգամանքները:

Առաջարկվող լուծումները

Առաջարկվում է ընդունել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում է՝

1. Նախագծով առաջարկվում է ներդնել գործերի բաշխման այնպիսի մի համակարգ, որի պարագայում հնարավոր կլինի օրենքով սահմանված կարգով գործերի բաշխումն իրականացնել նախապես որոշված հստակ չափանիշների հիման վրա՝ բացառելով սուբյեկտիվ մոտեցումները: Ընդ որում, այն պետք է գործի համակարգչային հատուկ ծրագրի միջոցով՝ հնարավորինս բացառելով մարդկային միջամտությունը:

Այսպես, դատարան մուտքագրված քրեական, քաղաքացիական և վարչական գործերն անհապաղ մուտք են արվում համակարգչային ծրագիր և նույն օրը՝ ժամը 20:00-ին, հավասարաչափ բաշխվում են տվյալ դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև՝ պատահական ընտրությամբ և հաշվի չառնելով գործերի մուտքագրման հերթականությունը: Եթե գործերը հավասարաչափ բաշխել հնարավոր չէ, ապա գործերը բաշխվում են այն հաշվով, որպեսզի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորներից յուրաքանչյուրին հանձնված գործերի միջև տարբերությունը չգերազանցի մեկը: Տվյալ դեպքում հաջորդ օրը գործեր բաշխելիս առաջին հերթին մեկական գործ պատահական ընտրությամբ հանձնվում է այն դատավորներին, ովքեր նախորդ օրվա բաշխման արդյունքում ստացել են ավելի պակաս թվով գործեր, իսկ մնացած գործերը բաշխվում են ընդհանուր կարգով՝ բոլոր դատավորների միջև: Դատավորի վարույթում առանձնակի բարդության գործի (գործերի) առկայության դեպքում դատավորը կարող է դիմել Դատարանների նախագահների խորհրդին՝ առաջարկելով իր անուն-ազգանունը ժամանակավորապես հանել բաշխման ցանկից կամ սահմանել իրեն բաշխվելիք գործերի առանձին տոկոսաչափ: Այդ դեպքում Դատարանների նախագահների խորհրդը կարող է որոշում կայացնել դատավորի անուն-ազգանունը ժամանակավորապես հանելու բաշխման ցանկից կամ սահմանելու նրան բաշխվելիք գործերի առանձին տոկոսաչափ՝ դրա համար սահմանելով կոնկրետ ժամանակահատված, որը չի կարող լինել ավելին, քան 6 ամիսը, իսկ բացառիկ դեպքերում՝ 1 տարին:

Գործերի բաշխման կարգ է սահմանվել ոչ միայն առաջին աստիճանի դատարաններում, այլ նաև վերաքննիչ դատարաններում և վճռաբեկ դատարանում՝ նախատեսելով այդ դատարաններում գործերի բաշխման կարգի որոշ առանձնահատկություններ:

Այդ նպատակով սահմանվել է, որ վերաքննիչ դատարանում գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված բողոքներով գործերը և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված բողոքներով գործերը համակարգչային ծրագիր են մուտքագրվում և բաշխվում միմյանցից առանձին:

Նախատեսվել են նաև համապատասխան կարգավորումներ դատավորի կողմից իր վարույթում քննվող գործի կամ գործերի քննության անհնարինության դեպքերի՝ դատավորի գործուղվելու կամ այլ դատարան տեղափոխվելու և այլ դեպքերի համար:

Նախագծով սահմանվել է նաև, որ համակարգչային ծրագիրը գործարկելիս ապահովվում է տվյալների գաղտնիությունը՝ բացառելով հնարավոր արտաքին միջամտությունը, իսկ համակարգչային ծրագրի գործարկմանը ապօրինի միջամտելը առաջացնում է քրեական պատասխանատվություն: Իսկ արդեն պատասխանատվության վերաբերյալ համապատասխան դրույթները լրացվել են «ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով:

2. Օբյեկտիվ վիճակագրության հավաքագրման և դատական իշխանության՝ հանրության առջև հաշվետուականության ապահովմանն է ուղղված դատական իշխանությանը վերաբերող վիճակագրական տեղեկատվության դասիչները և հրապարակման ենթակա վիճակագրական տվյալները

սահմանելու գործառնությունների տարանջատումը վիճակագրության հավաքագրման գործառնությից: Այս առումով, նախագծով առաջարկվում է վիճակագրական դասիչները և հրապարակման ենթակա վիճակագրական տվյալների ցանկը սահմանելու իրավասությունը վերապահել ՀՀ կառավարությանը, իսկ դատական ինքնակառավարման մարմինն վերապահել վիճակագրական դասիչների ցանկը համալրելու իրավասություն: Դատական վիճակագրության հավաքագրման և տեղեկատվության հրապարակման գործառնությը շարունակելու է իրականացնել դատական դեպարտամենտը: Միաժամանակ, նպատակ ունենալով երաշխավորել հանրության համար կարևոր տվյալների հրապարակումը, նախագծով նախատեսվում է այն նվազագույն վիճակագրական տեղեկատվության ցանկը, որը ենթակա է պարտադիր հրապարակման:

Նախագիծը նախատեսում է վիճակագրական տեղեկատվության հավաքագրման նվազագույն պահանջները, ժամկետները, դրանց հրապարակման և տարածման կարգը: Վիճակագրության մատչելիության ապահովման տեսանկյունից նախագծով նախատեսվում է պահանջ այն հրապարակել դատական իշխանության պաշտոնական կայքում հատուկ առանձնացված բաժնում: Դա թույլ կտա ունենալ վիճակագրական տվյալների էլեկտրոնային պահոց, հեշտորեն օգտվել տարբեր տարիների վիճակագրական տվյալներից, կատարել համեմատություն և վերլուծություններ:

3. Նախագծով նախատեսվում են նաև հետևյալ սկզբունքային կարգավորումները՝

- առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի նախագահների պաշտոնավարումը սահմանափակվել է 4 տարի ժամկետով: Ընդ որում, միևնույն անձը չպետք է հնարավորություն ունենա նշանակվելու նույն դատարանի նախագահի պաշտոնում 2 անգամ անընդմեջ,
- սահմանվել են դատարանի նախագահի պաշտոնը թափուր մնալու հստակ հիմքերը,
- այն դեպքում, երբ դատարանի նախագահի լիազորությունները դադարում են (բացառությամբ դատավորի լիազորությունները դադարելու կամ դատարանի նախագահի լիազորությունները դադարեցնելու հիմքով), և Հանրապետության Նախագահը օրենքով սահմանված կարգով նշանակում է նոր դատարանի նախագահ, ապա դատարանի նախագահը շարունակում է պաշտոնավարել տվյալ դատարանի դատավորի պաշտոնում,
- նախատեսվում է, որ էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը և ուսումնական հարցերի հանձնաժողովը ձևավորվում են ոչ թե դատարանների նախագահների խորհրդի կողմից, այլ՝ դատավորների ընդհանուր ժողովի,
- քաղաքացիական դատավարությունում կատարելագործվում է պատշաճ ծանուցման կարգը,
- ընդլայնվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածով սահմանված դատական նիստի հետաձգման համար հիմք հանդիսացող հանգամանքները,
- կատարելագործվում են վճռաբեկ բողոքին ներկայացված պահանջները: Մասնավորապես վճռաբեկ բողոք ներկայացրած անձը վճռաբեկ բողոքում պետք է հնարավորինս մանրամասն հիմնավորի տվյալ գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի առկայությունը,
- նախատեսվում է, որ վճռաբեկ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտում պարտավոր է նշել, թե վճռաբեկ դատարանը կոնկրետ գործով ներկայացված բողոքն ինչ հիմքով է ընդունել վարույթ՝ մանրամասն հիմնավորելով ներկայացված բողոքում վարույթ ընդունելու հիմքերի առկայությունը: Նշված հանգամանքը ավելի կանխատեսելի կդարձնի վճռաբեկ դատարանի գործունեությունը եւ կբարձրացնի բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումների նկատմամբ վստահությունը,

- վճռաբեկ դատարանի կողմից վարույթ ընդունված վճռաբեկ բողոքները տեղադրվում են պաշտոնական կայքում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում դռնփակ կարգով քննվող գործերի: Նշված կարգավորումը նույնպես կնպաստի վճռաբեկ դատարանի գործունեության թափանցիկության բարձրացմանը:

4. Նախագծով նախատեսվել են նաև մի շարք այլ կարգավորումներ:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է՝

1. Նախատեսվում է ունենալ դատավորների միջև գործերի բաշխման այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտա դատավորների միջև գործերի բաշխումն իրականացնել հատուկ համակարգչային ծրագրի միջոցով՝ օբյեկտիվ չափանիշների հիման վրա՝ արդյունքում ապահովելով օրինական դատավորի սահմանադրական պահանջը:

2. Դատարանների և դատավորների կողմից հաշվետվությունների պարտադիր ներկայացման սկզբունքի ներդրումը կնպաստի հանրության առջև դատական իշխանության թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև պետության ներքին քաղաքականության իրականացման ոլորտում վիճակագրական տեղեկատվության վրա հիմնված որոշումների կայացմանը:

3. Արդյունքում նաև ակնկալվում է ունենալ մի համակարգ, որը հնարավորություն կտա դատարանների նախագահներ նշանակել սահմանափակ ժամկետով՝ օրենքով սահմանված հստակ չափանիշների հիման վրա:

4. Նշված նախագծերն ընդունվելու դեպքում կբարձրացվի դատական ակտերին ներկայացվող հիմնավորվածության եւ պատճառաբանվածության աստիճանը, կբարելավվեն դատական ծանուցումները, կկատարելագործվեն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու բովանդակային հիմքերը, դատավարության մասնակիցների համար ավելի պարզ եւ կկանխատեսելի կդառնա որոշելը, թե ինչու կոնկրետ դեպքում վճռաբեկ բողոքն ընդունվեց վարույթ կամ դրա ընդունումը մերժվեց, կիջեցվի վճռաբեկ դատարանի դատավորների ծանրաբեռնվածությունը: